ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ

# Հ Ր Ա Մ Ա Ն

« 09 » մարտի 2015 թ.  N 24  ք. Ստեփանակերտ

**«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» թիվ 03 առ 06.02.2015 թ. հրամանում փոփոխություն կատարելու մասին**

Ղեկավարվելով «Դատախազության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 21-րդ հոդվածի 2-րդ մասով, համաձայն ԼՂՀ Գլխավոր դատախազի թիվ 09 առ 28.01.2009թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողով ստեղծելու մասին» հրամանի և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի, ԼՂՀ Գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի անդամ, ԼՂՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ, արդարադատության 1-ին դասի խորհրդական Ռոբերտ Էդիկի Ղահրամանյանը պաշտոնից և ԼՂՀ դատախազության համակարգից ազատվելու կապակցությամբ՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ  Ե Մ

1. Վաղաժամկետ դադարացնել ԼՂՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի անդամ, արդարադատության 1-ին դասի խորհրդական Ռոբերտ Էդիկի Ղահրամանյանի լիազորությունները:

2. Նշանակել ԼՂՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի անդամ՝

ԼՂՀ գլխավոր դատախազության կազմակերպա-վերահսկողական, վիճակագրության, վերլուծության, իրավական ապահովման, միջազգային կապերի և անձնակազմի հարցերով բաժնի պետ Կարինա Միքայելի Սաֆարյանին ՝ երեք տարի ժամկետով:

3. Հրամանն ուղարկել ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ԼՂՀ գլխավոր դատախազության ավագ դատախազին ու դատախազին, բաժինների պետերին և ԼՂՀ քաղշրջդատախազներին :

4. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Արդարադատության  երրորդ դասի**
**պետական խորհրդական** **Ա.Ա.Մոսիյան**